



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

30 դեկտեմբերի 2009թ.

ք. Ստեփանակերտ

26-Լ

ՈՐՈՇՈՒՄ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք և մարդուն կարելի է ազատությունից զրկել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Այդպիսի դեպքերից սույն որոշման իմաստով ուշադրության է արժանի այն դեպքը, երբ անձը զրկվում է ազատությունից, եթե առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով: Նման դեպքում կիրառվում է քրեադատավարական հարկադրանքի հատուկ տեսակ՝ խափանման միջոց, որը սահմանափակում է քաղաքացիների անձնական ազատությունները: Սակայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խափանման միջոցները կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով:

Գործը քննող մարմնի կասկածյալին կամ մեղադրյալին կալանավորելու մասին միջնորդությունը դատարանը պետք է քննի անհապաղ, անկախ այն հանգամանքից, թե միջնորդությունը ներկայացվել է աշխատանքային, թե՛ ոչ աշխատանքային օրերին:

Նմանատիպ խնդիրներ են ծագում նաև խուզարկություն կատարելու ժամանակ, որի դեպքում խուզարկություն կատարող անձը պետք է ղեկավարվի ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ և 12-րդ հոդվածների պահանջով: Խուզարկություն կատարելու իրավաբանական հիմքը քննիչի միջնորդության հիման վրա տրված դատարանի որոշումն է: Խուզարկությունը օպերատիվ գործողություն է և դատարանը պետք է անհապաղ ապահովի այդ գործողության արդյունավետ իրականացումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում հերթապահություն սահմանելու մասին կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նախագահն անհրաժեշտության դեպքում սույն կարգի հիման վրա կարող է ընդունել իրավական ակտ՝ դրանով սահմանելով կարգով նախատեսված պահանջների կիրառման առանձնահատկությունները:

3. Մինչդատական վարույթն իրականացնող մարմինների ոչ աշխատանքային ժամերին ներկայացվող անհապաղ քննության ենթակա միջնորդությունների քննության հետ կապված հարցերի լուծումը ապահովում է դատարանի նախագահը:

**ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ